

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ԵՂԻՇԵ
ՉԱՐԵՆՑԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

...Իմ օրերում պատմությունն էր
յուրաքանչյուր քառիս նայում...
...Իմ օրերում շա՛տ դժվար էր երգը՝
կյանքի համար երգած,
Յուրաքանչյուր քառը-կամ մի
թռիչք էր վեհ, կամ-մութ արկած...
(Ե. Չարենց, «Անտիպ և չհավաքված երկեր»)

Չեղինակային նորաբանությունները խոսքի արտահայտչականության հիմնական կրողներն են. նրանք համատեքստերին բերում են բանաստեղծական ներշնչանքի, վառ պատկերավորության, հուզաարտահայտչական որակ՝ նպաստելով վերջիններիս գեղարվեստականությանն ու ոճական ուղղվածությանը:

Նորաբանությունների ստեղծումը Եղիշե Չարենցի չափածոյի լեզվում պայմանավորված է ոչ միայն գեղարվեստական, արտահայտչական գործառույթներով, այլ նաև բանաստեղծի աշխարհըմբռնումով, կյանքի երևույթները գեղարվեստականորեն վերարտադրելու անհատական արտասովոր մտածողությամբ:

Չիշենք Վ. Բրյուսովի բանաձևումներից մեկը. «Պոեզիայում բառը նպատակ է, իսկ արձակում՝ միջոց»: Եղիշե Չարենցի չափածոյում բառը նպատակ է. չարենցյան նորաբանությունները կրում են ժամանակի կշիռն ու կնիքը, մարգարե-բանաստեղծի տարերային ու ալեկոծ խառնվածքի վկաներն են: «Յարդագողի ճամփորդին» ամեն քայլափոխի ուղեկցել են գրական անակնկալները. այդպիսի անակնկալներով ու «վերուվարումներով» լի են նաև բանաստեղծի ստեղծագործությունների նորակերտ բառերը:

Տեղյանական շունչը դժվար չէ որսալ Չարենցի ստեղծագործությունների առաջին շրջանում՝ («Երեք երգ տխրադալուկ աղջկան» (1913թ.), «Տեսիլաժամեր» (1915թ.), «Ծիածան» (1916-1917թթ.) և այլն):

Գործածելով տեղյանյան մի շարք նորակերտ բառեր (տխրադալուկ (I, 12), լուսե (I, 33), երազուն (I, 33), կարոտակեզ (I, 149), անարև (I, 62))՝ Չարենցը միաժամանակ ստեղծել է երազորեն, հոգևարել, անբջրորեն, անբջավոր, ծիածանել, անբջալույս, սգահանդես, աղոթանք նորակազմությունները, որոնք դիպուկ են բնութագրում անորոշության և անհուսության, լուսե անուրջների ու կարոտանքի մեջ գտնվող պատանի բանաստեղծի, ինչպես նաև քնարական հերոսի թախծոտ տրամադրությունները: Օրինակ՝

...Ու բզկտվեց հայացքներից անկենդան

Որք սիրտը մեր՝ երազորեն հոգևար(Լ, 63) :
Մահը անուշ, անբախտ յոթնություն ունի...(Լ, 111)
Ճառագայթներն այնքան հե՞զ, այնքան ջի՞նջ
ճախրում էին, հոգևարում ու մարում ... (Լ, 92)

Հեղափոխության բարձրաշունչ մթնոլորտում ծնվեցին չարենցյան մի շարք նորակերտ բառեր: Օրինակ՝ «Ամբոխները խելագարված» պոեմում բանաստեղծն ատեղծում է մի գունեղ մթնոլորտ՝ գործածելով հրակարմիր, հրաբոսոր, արևակամ, արյունամած, արևուն, մխաշաղախ, ահատեսիլ, կարմրածուխ նորակազմությունները, որոնք ամենայն խորությամբ բացահայտում են հեղինակի գաղափարական մտահղացումը: Պոեմը բառային, հուզական մի գրոհ է հին աշխարհի դեմ: Այս բառերը բացահայտում են հեղափոխության տարերթով բռնկված «խելագարված ամբոխների» արտասովոր ձգտումը:

Շարժման լարված զգացողությունը Չարենցի բանաստեղծական մտածողության ամենակենսունակ տարրն է: Նրա շիկացած մտքի ծնունդն են հրաբոսոր, հրակարմիր, կարմրածուխ, արյունամած բառերը:

Դիպուկ է գործածված արևակամ բառը, որն արտահայտում է հեղափոխական ոգևորությամբ համակված ամբոխների ձգտումը դեպի արևն ու ապագան. Նա կտրել էր արևակամ ամբոխների կարմիր ուղին ... (II, 84)

Լուրք աչքերով արևակամ-դաշտն են դիտում խավարամած(II, 89) :

Իմպերիալիստական պատերազմի «դանթեական դժոխքի» արյունոտ ու մղձավանջային պատկերներն առավել տպավորիչ են ներկայացնում հետևյալ նորակազմությունները՝ ահահոտ, անալելու, անբիբ, արնաշաղ, հոգենուխ, մահաշշունջ, արնաբույր («Դանթեական առասպել»):

Մենք լուռ փորեցինք սառցի կուրծքը ծեր

Եվ անալելու թաղեցինք նրան (II, 21) :

...Ընկած էր մի կին՝ արնաշաղ ու մերկ,

Խոռոչի նման բացված ահահոտ՝ քրքջում էր

Կարծես բերանն արնաներկ (II, 25) :

Մի անհուն կսկիծ ուսերիս առած՝

Լուռ քայլում էինք արնաբույր տոթում (II, 19) :

Բանաստեղծական խոսքը տարողունակ են դարձնում նաև վրեժաժպիտ, կրակահանդես, արնակեզ, արնակրակ, տեսիլանման, քայլերեր նորակազմությունները

(«Ազգային երազ»): Այս բառերն ահագնացնում են կործանվող կյանքի դաժան պատկերները.

...Վազում էր առաջ ու երգ էր երգում

Վրեժաժպիտ ու մահագուշակ (II, 46) :

Ու փախչում էին նրանք քայլերեր,

Կիսամեռ մարդիկ, կիսավառ կիներ

Ու ծերունիներ տեսիլանման (II, 58) :

«Ազգային երազը» բանաստեղծին ներկայանում է կրակահանդեսի պատկերով.

Կրակահանդես, տոն էր երևի

Տոթ, արնակրակ հրդեհը այդ վառ (II, 45) :

Եվ ահա շտապ, խմբերով ցիր-ցան,

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, տուրք տալով ֆուտուրիզմի ուղղությանը գրականության մեջ, ցանկանալով գեղարվեստական մարմին տալ իր «ծախ ու մոլոր» հայացքներին, Չարենցը կամայականությունների է դիմում ոչ միայն գեղարվեստական լեզվի, այլ նաև նորաբանությունների հարցում: Նա ստեղծել է հետևյալ նորակազմ բառերը՝ շոգեգալուստ, էլեկտրահոգի, պոեզոգուռնա, պրոլետստոնետ, պրոլետպառնաս, սովզնացք, պրոլետկուպե, որոնք ոճական արժեք չեն ներկայացնում:

Բանաստեղծական ներշնչանքից զուրկ են նաև երկաթ արմատով կազմված հետևյալ բառերը՝ երկաթադեմ, երկաթավորվել, երկաթավոր, երկաթաթև, երկաթաքայլ, երկաթաթերթ:

Սեփական ստեղծագործական ճակատագրի, իր անցած խորդուբորդ ուղիների մասին բանաստեղծի խոհերի ու մտորումների խտացումներն են հռնդուն, բարձրաշառաչ, հողմաշառաչ, լուսածյունեն նորակազմ բառերը.

Ղու բարձրացել ես մաքառումով

Դեպի ահռելի բարձրություններ

Տեսել զազաթներ լուսածյունեն (IV, 13):

Այս այգաբացի երգը զրնգուն

Իմ բարձրաշառաչ երգն է ավետել (IV, 19):

...Քեզ հրկիզեց կյանքում մի անսահման կարոտ, մի անափ սեր,

Նա որպես շանթ՝ պայթեց քո խոհերի վրա,

Որպես կայծակ՝ շաչեց հողմաշառաչ (IV, 48):

Բանաստեղծը զայրույթի պոռթկումով է խոսում հայ ժողովրդի պատմական «անանցյալ» անցյալի, հատկապես թագավորների և իշխանների մասին («Պատմության քառուղիներով»): Այդ ժխտողական վերաբերմունքը վառ արտահայտվել է հետևյալ նորակազմություններում՝ ոչնչատեսիլ, անգաղափար, անանցյալ, անբուրդ.

Պատմության քառուղիներում առաջնորդել են նախ

Մեզ նախնիներ անստույգ ու ոչնչատեսիլ (IV, 204) :

Ի՞նչ խոսքերով երգեմ և ի՞նչ տենդով պատմեմ

Մեր անանցյալ անցյալը, մեր ընթացքը (IV, 204) :

Պատմության քառուղիներով մենք քայլեցինք երկար

Անդեկ, ցաքուցրիվ, անգաղափար (IV, 203) :

Հայ ժողովրդի պատմական ճակատագրի բանաստեղծական ըմբռնման ինքնատիպ արտահայտություններ են ողբածայն, ողբանվագ, արյունաքան բառերը, որոնք Չարենցը գործածում է «ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծության մեջ:

Բանաստեղծական խոսքին հուզավառ ու լավատեսական երանգավորում են տալիս ոսկեպուրպուր, հրահրան, պուրպուրե, հրակարմիր նորակազմությունները.

Ոսկեփրփուր, ոսկեպուրպուր
Փռնեմ չորս դին, թափեմ բուռ-բուռ
Երգերը իմ հրահրան (I, 299) :

Տպավորիչ պատկերավորությամբ են աչքի ընկնում նաև հրասիրտ, հրասուրբ, հրադեմ, կրակուն, հրափ, հրափթիթ, ոսկեբոսոր, ոսկեշաղ նորակազմությունները, որոնք

բացահայտում են բանաստեղծի՝ հեղափոխական կռիվների շրջանում ստեղծված բոցավառ երգերի շիկացած ոգին («Ողջակի՛գվող կրակ») .

Հով է կարծես, կարմիր մի հով, հրե մի սյուք,
Որ անցնում է հրաբորբոք, հրաշշուկ (I, 139) :
Երկնից իջած հորիզոնի գծի վրա
Վառել է մի ոսկեբոսոր, կարմիր քուրա (I, 139) :
Բրոնզե քու՛յր իմ, բրոնզե քու՛յր իմ, բրոնզե հարս,
Լուսավոր դու, հրասիրտ ու հրավարս,
...Արնոտել են կրակներիդ հիմա որբ,
Օ՛, երկի՛ր իմ, բրոնզե քու՛յր իմ հրասուրբ (I, 160) :

Հոգեկան և մարմնական հրդեհի, արևային տարփանքի մեջ գտնվող քնարական հերոսի ապրումներն ու տրամադրությունները դիպուկ և արտահայտիչ են բնորոշում արեգմածին, ոսկեծայն, սկեղեմ, հուրհուր, ոսկեծուփ, ոսկենալ, արնաքամ բառերը («Ութնյակներ արևին») .

Շոգ շրթեր ու կոնքեր է ուզում,
Գգվանքներ արնաքամ ու տաք (I, 252) :
Տեսնում եմ՝ արևի վրա
Վրնջում են ծիեր ոսկենալ,
Մերկացել են աղջիկները խելառ
Ու ծծում են շրթերը նրա (I, 255) :
Իմ ուղեղը բորբոք, կրակուն՝
Ալ գծեր ծփծփուն, հուրհուր... (I, 260) :

Այս բառերի ստեղծումը պայմանավորված է Չարենցի ինքնատիպ զգացումով, կրքի և զգացմունքի բացառիկ տարերքով:

«Ամենգրական հավերժության» ճանապարհը բռնած բանաստեղծը դիպուկ է գործածում իրեն իսկ բնութագրող հավերժատես և հավերժասեր բառերը.

Ոտքերս ամուր, հողի մեջ մխած, գլուխս աստղերում,
Անսասան, հաստատ կանգնած հողմային օրերի հրում,
Իմ հավերժատես, պայծառ աչքերով նայում եմ հեռուն (II, 95) :
Մի կարոտ է հոգիդ, հեռու աստղի մի փայլ,
Քայլի՛ր, քայլի՛ր անվերջ, հավերժասե՛ր եղբայր (I, 147) :

Բանաստեղծական ուրույն ներշնչանքով են կերտվել Կոմիտասին բնորոշող հետևյալ բառերը՝ ծայնածին, ծայնակիր, ծայնաշխարհ, («Կոմիտասի հիշատակին», «Էպիտաֆիա»).

Աստ Կոմիտասն է հանգչում՝ իբրև հող ու աճյուն առհավետ:

Սի'րտ մոխրացած, դարձած հող՝ երբեմնի անոթ ծայնածին: (Անտիպ երկեր, էջ 115)

Ծայնաշխարհ ես՝ դարձած տուն

Որպես մի մայր- արագիլ... (Անտիպ երկեր, էջ 646, բնագրային տարբերակ)

Սիրտ մոխրացած, դարձած հող- երբեմնի անոթ ծայնակիր:

(Անտիպ երկեր, էջ 539, բնագրային տարբերակ)

Կոմիտասի հանճարի հանդեպ բանաստեղծի խորունկ հոգեհարազատության ու պատկառանքի վկայությունն են այգաբեր, կենսաբեր, հայրենանալ, մշտակայծ, նրբածայն, երգածայն, հուրհուրան նորակազմությունների հետևյալ կիրառությունները.

Կխաղաղվի վերջապես

Խոնջած աճյունը քո հար-

Դարձած մոխիր կենսաբեր,

Հայրենացած, սրբացած

Կապրի ոգիդ հմայող... (Անտիպ երկեր, էջ 642, բնագրային տարբերակ)

Խոնարիվել եմ ահա ես

Աճյունիդ դեմ երգածայն: Անտիպ երկեր, էջ 334)

Բայց գիտեի,որ հողում ունի հուրեր մշտակայծ: (Անտիպ երկեր, էջ 337)

Անհանգրվան, «ամպի նման հալածական» երաժշտագետի ողբերգական ճակատագիրը, կյանքն ու գործունեությունն են ամբողջացնում հետևյալ նորակազմ բառերը՝ անդազադ, արնհոլով, արնատառ, հրաճարակ, արնական.

Հողմով տարված ինչպես շյուղ,

Ուղիներում դու տեսար

Հրաճարակ կյանք ու խուղ: (Անտիպ երկեր, էջ 310)

Ցանելով ցուլք արնաքամ,

Փռելով մահ ամեն կողմ:

Տախտակների վրա իր

Գրված գրով արնատառ

Բերեց պատգամ միայն մի-

«Լոկ աշխատանքն է արդար»: (Անտիպ երկեր, էջ 649, բնագրային տարբերակ)

Միջնադարյան պատմագրի կերպարն ավելի տպավորիչ են դարձնում հոգնավաստակ, հոգնախոհ, նայիրական բառերը պատմիչին նվիրված անավարտ պոեմում.

Կարծես ծեռքով անմահ, առաքված վերուստ,

Շունչ է իջնում կարծես գոլ, հարազատ ու անհուն,

Հոգնավաստակ, հոգնախոհ դեմքին ծերունու: (Անտիպ երկեր, էջ 361)

Ամոթխած ու մատաղատի պատանուն, նրա՝ «աստվածային գեղով պսակազարդ» պատկերն են բնորոշում հիսուսային, կիսակին, անգրկելի, տխրամարմին նորակազմությունները.

Նայել է լու՞ռ, երկա՞ր, կասկածելով

Այդ հրաշքի, այդ լուռ խորհրդի

244) Անգրկելի, անծուկ գոյության լինելությանն անգամ: Անտիպ երկեր, էջ

...Կիսակնոջ դեմքով և պարմանու մարմնի

Անեզրական գեղի տրտմությամբ

Եվ հանճարի սիրով ու վրձինով

Ամմահացած Հիսուսն այդ տխրամարմին (Անտիպ երկեր, էջ 245) :

Չարենցի բանաստեղծական լեզվին առանձնահատուկ գունազեղություն են տալիս փոխաբերական իմաստով գործածված մակդիրները (էմալե պրոֆիլ, էմալե դեմք, կաթե երկինք, մարխե մտքեր, ակաթե աչքեր, մոխիրե ուղի, ճառագայթե սուր, օղե ապարանք, վարդե շուրթեր): Այսպես, «լուսամփոփի պես աղջկա» սառն ու անտարբերություն արտահայտող փայլը դիպուկ է բնութագրում ակաթե նորակազմությունը.

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ հոգին,

Որ չմարի իմ հոգին քո ակաթե աչքերում (I, 69) :

Քնարական հերոսուհու անկենդան գեղեցկությունն ու անզգացմունք, սառն էությունն է բնութագրում էմալե մակդիրը.

Էմալե պրոֆիլը Չեր,

Չեր հակինթ աչքերը բիլ

Ես այսօր կուզեմ երգել (I, 178) :

Սիւնույն բանաստեղծական շարքում («էմալե պրոֆիլը Չեր») բանաստեղծը խոսքային մակարդակի հականշություն է ստեղծում՝ էմալե դեմքին հակադրելով վարդե շուրթերը, որը կրակոտ զգացմունքի պատկերավոր արտահայտությունն է.

Գիտե՞ք, որ գարուն է արդեն,

Դյութուն են շրթերը վարդե (I, 197) :

Ուշագրավ է մարխե մակդիրի գործածությունը մայրամուտ, մութ, մահ, մահահոտ համագործածական բառերի միջավայրում: Գեղազետ-բանաստեղծը դիմել է ոճական հնարանքի՝ մ բաղաձայնի կրկնությամբ ստեղծելով բաղաձայնույթ (բառերի և բանատողերի սկզբում), որն էլ դարձել է մահվան շունչն զգացող բանաստեղծի «մահահոտ» տրամադրությունների արտահայտման հիմնական միջոց.

Մառ մորմոքում է մայրամուտը:

Ստորումներս մահ են, մութ են,

Մարխե մտքեր են միայն միտում...

Ստորումներս մահահոտ են...

Մխում է մարիւը: Մարդը: Մութը: (Անտիպ երկեր, էջ 247)

Բանաստեղծը շռայլ է նաև հուզական մակդիրների գործածության մեջ. դրանք ստեղծագործությանը քնարական նուրբ երանգավորում են տալիս, ընթերցողի մոտ առաջացնում այս կամ այն հույզը, հոգեվիճակը.

Նա մերթ կանչել է ինձ սրինգային ծայնով.

Մերթ քնարի քնքուշ նվագի պես: (Անտիպ երկեր, էջ 346)

Տրված է քեզ ամենայն ինչ, որ վայելես աշխարհում-
Եվ սիրո հուր հրապուրիչ, և սիրաբույր մի գարուն: (Անտիպ երկեր, էջ 506):

Նա մի աղջիկ էր, մի դիցուհի,

Որ օրերում այն տրտմաթախիծ

Քեզ նայեց նազով ու ծիծաղեց (IV, 144):

Շամիրամի ցանկասիրությունը դիպուկ է բնութագրում շամբշոտաշուրթ նորակազմ բառը.

Դա՛ռն է խորհուրդը սիրո, շամբշոտաշուրթ Շամիրամ (I, 208):

Մտածողության ընդգծված պատկերավորությունը, հասկացությունների փոխաբերական իմաստավորումը ցայտուն են արտահայտված հետևյալ նորակազմ բառերում՝ հոգեմուխ, մգլախոհ, հրաքանքար, դրախտաճեմ, վարդաշունչ, հրաբույր:

Անհատական ինքնատիպ դրոշմով աչքի են ընկնում այն նորակազմությունները, որոնք բանաստեղծը կերտել է հոմանիշ բաղադրիչների միաձուլումով՝ վիթխարահսկա, հսկավիթխարի, հոգնավաստակ, տրտմաթախիծ, ժանտադաժան:

Ոճական առումով հաջողված են հատկապես խոսքային մակարդակի իոմանիշ բաղադրիչներով կազմված բարդ բառերը՝ հրակարմիր, արնակրակ, արնակարմիր, հրաբոսոր:

Նույն բառի ծանծրալի կրկնությունից և միօրինակությունից խուսափելով՝ Չարենցը մինևույն արմատով կերտել է բանաստեղծական հոմանիշ բառերի մի ամբողջ շարք՝ տխրաբառ-տխրաբարբառ, ողբանվագ-ողբածայն, արնացուլ-արնաշառայլ, արևտենչ-արևակամ-արևաբաղձ, ոսկեբոսոր-ոսկեպուրպուր, մանրամարմին-անրակազմ, արնավանկ-արնատառ, արնհողով-արնաշաղ, նազավոր-նազանուտ, նրբալույս-անրջալույս:

Չարենցի չափածոյում զգալի թիվ են կազմում նաև համատեքստային բառային միջավայրով պայմանավորված նորակազմությունները: Բանաստեղծը նորաբանություններ է ստեղծել նախապես գոյություն ունեցող բարդ բառերի բաղադրիչներից մեկի համաբանությամբ: Այսպես, արյունակալ բառի երկրորդ բաղադրիչի համաբանությամբ նա ստեղծել է թարախակալ բառը.

...Որ դարձրեց իմ հոգին /արյունակալ/ թարախակալ մի երագ:

(I, 363, բնագրային տարբերակներ)

Տերյանյան նրբաթել բառի նուրբ բաղադրիչի, Յ. Թումանյանի ստեղծած նորափայլ բառի նոր բաղադրիչի համաբանությամբ են ստեղծվել նրբաճիչ և նորախոհ նորակազմությունները.

Մեր նորափայլ արևով

Բեղմնավորված՝ անմար...

Իր նորախոհ մանգաղով՝

Միայն բարիք հնձող

Հին արևներ է քաղում: (Անտիպ երկեր, էջ 127)

...թքե թութխալով կպցնեն, շինեն տող-տող

«Նրբաթել» երգերի խալիմ նրբաճիչ երգիչները թող : (Անտիպ երկեր,

էջ 282)

Երբեմն բանաստեղծն իր իսկ ստեղծած բարդության մեջ է կատարում բաղադրիչի փոփոխություն՝ բանաստեղծական խոսքի մեջ բազմազանություն մտցնելով: Օրինակ՝

«Անառակ որդի» բանաստեղծության մեջ նա գործածում է փառաճեն բառը. բանաստեղծության բնագրային տարբերակում հանդիպում ենք դրախտաճեն բառի գործածությանը.

Մի՞թե քո հոգին մնաց անտարբեր

Դեպի բացառիկ բախտն այս փառաճեն: (Անտիպ երկեր, էջ 137)

Մի՞թե քո հոգին, Նորենց, չհարբեց

Բացառիկ բախտով այս դրախտաճեն: (Անտիպ երկեր, էջ 553)

Մանկածայն, տխրագույն, արնահամ նորակերտ բառերի երկրորդ բաղադրիչների համաբանությամբ բանաստեղծը կերտել է նաև արևածայն, ինքնագույն, մարմնահամ բառերը: Բարդության բաղադրիչներից մեկի փոփոխությամբ են ստեղծվել նաև մեր աշխատանքում արդեն հիշատակված հոգնավաստակ ու հոգնախոհ, ձայնաշխարհ, ձայնածին, ձայնակիր բառերը:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Չարենցի չափածոյի իմաստային նորաբանությունները՝ անրջանալ, հրավեր, պուրպուր, զանգել: Սրանք այն բառերն են, որոնք նոր են ոչ թե ձևով, այլ իմաստով:

Ատ.Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» (հ. I, էջ 184) անրջանալ բառը վկայված է գրաբարյան հետևյալ նշանակությամբ՝ «անուրջի, երազի մեջ խոսել, զառանցել»։ Չարենցի չափածոյում (հատկապես առաջին շրջանի ստեղծագործություններում) հանդիպում ենք այս բառի բազմաթիվ գործածություններին՝ «երազ դառնալ, աներևութանալ, անեանալ» նշանակությամբ, որը լիովին համապատասխանում է պատանի բանաստեղծի երազային ու թախծոտ տրամադրություններին: Օրինակ՝

Ինչու՞ եկար և ինչու՞ անրջացար ու չկաս,

Հրաժեշտի մի համբույր-ու հեռանում ես ահա... (I, 96)

«Սոմա» պոեմի ինքնագրում հանդիպում ենք հրավեր բառի՝ «հրից ավերված, հրի ճարակ դարձած» իմաստին, որը վկայված չէ հայերենի բացատրական բառարաններում:

Բանաստեղծը, քունկլամ հուզական տարերքով, հեղափոխության տոնական տրամադրությամբ առաջ է քաշում հին աշխարհի հոնիգեյլու, կործանելու միտքը: Հրավեր քառի հիշյալ նշանակությամբ շործածությունը դառնում է բանաստեղծի հույզերի պոտանիայտման միջոց իր իսկ կեռուած ոսկեհորո, կրակուն քառերի միջավայրում:

Հրոհ՝ ո-հրոհ՝ ո վեր են թռչում
Կյանքերը մեր կարելներ
Տիեզերքի աղջամուղջում
Ոսկեհորո ու հրավեր:
Կրոսնի է կյանքն հրմա-
Չահագաղղվա՛ն, կրակուն... (II, 76, 329)

Իմաստային նորաբանություն կառելի է համարել նաև պուրպուր քառը «կառնուագույն գործվածքի զգեստ, ծիրանի» իմաստով.¹ Օրինակ

Հագել էր-պուրպուր, ոսկի՝
Շողուն էր արևի ներքու... (II, 143)

Ստ.Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» վկայված է զանգել քառը՝ «1. հունցել 2. խառնել, միավորել» նշանակությամբ (հ. II, էջ 8). Չարենցի չափածոյում հանդիպում ենք զանգել քառի կիրառությանը՝ «զանգ հնչեցնող» իմաստով.

Օ, ո՛չ մի ժամկույ չի զանգել այդպես,
Զեկուզ հրդեհներ շատ է պատահել (II, 52):
Եվ ժողովրդի զարթնելու հուսով
Ձիլ զանգում էին նրանք երկուսով,
Ու նրանց հուժկու ձեռքերի տակին
Դղրդում էին զանգանքն ահագին (II, 53):

Քրականության ջանք

1. Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Ե., 1957:
2. Մելքոնյան Ա., Ակնարկներ հայոց լեզվի ռմաբանության, Ե., 1964:
3. Չարենց Ե., Երկերի ժողովածու, (հ. I-VI), Ե., 1962-1967:
4. Չարենց Ե., Ամսօր և չափազանց երևեր, Ե., 1983:
5. Պառլոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Ե., 1970:
6. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1989:

Բառարաններ

1. Մալխասյանց Ստ., Հայերեն բացատրական բառարան (I-IV, Ե., 1944-1945):
2. Նոր քառերը հայկազեան լեզուի (I-II, Կենտրոն, 1836-1837):

¹ Պուրպուր քառի «մուգ կամ բաց կարմիր» նշանակությամբ գործածությանը հանդիպում ենք Ավ. Իսահակյանի ստեղծագործություններում: Տե՛ս Հայկական համաքարբառ. Ավետիք Իսահակյան. հատոր I, Երևան, 1975 թ., էջ 634: Հիշյալ նշանակությամբ Չարենցը նույնպես գործածել է այս քառը (Չուզվում են օրերը պուրպուր(I, 153)):